

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2023 թ. փետրվարի 23-ին կայացած թիվ 13 նիստի

Գիտական խորհրդի 38 անդամներից մասնակցել են 31-ը:

Օրակարգ՝

1. ԵՊՀ նոր խմբագրությամբ կանոնադրության մեջ առկա նորությունների ներկայացման հարցը;
2. ԵՊՀ գիտական խորհրդի նոր կազմի ձևավորման առնչությամբ կենսաբանության ֆակուլտետի կողմից ընտրովի մեկ անդամի առաջադրման և ընտրության հարցը;
3. Կենսաբանության ֆակուլտետի 90-ամյա հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպման և անցկացման հարցը;
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ նոր խմբագրությամբ կանոնադրության մեջ առկա նորությունների ներկայացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, դեկանի տեղակալ կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանը: Մանրակրկիտ ներկայացվեց «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի նոր խմբագրությամբ կանոնադրությունը, հաստատված հոգաբարձուների խորհրդի 2023թ հունվարի 30-ի որոշմամբ (Արձանագրություն թիվ 1): Ներկաները ծանոթացան կանոնադրության ընդհանուր դրույթների, ԵՊՀ-ի իրավական կարգավիճակի, բուհի գործունեության նպատակի և իրավասությունների, պարտականությունների և ԵՊՀ կառուցվածքում առկա որոշակի փոփոխությունների հետ:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ գիտական խորհրդի նոր կազմի ձևավորման առնչությամբ կենսաբանության ֆակուլտետի կողմից ընտրովի մեկ անդամի առաջադրման և ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը: Բաց քվեարկության դրվեց կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ, պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանի թեկնածությունը: Գիտական խորհրդի նիստին ներկա 31 անդամների բաց քվեարկության արդյունքներով (կողմ-27 և ձեռնպահ-4) ԵՊՀ-ի գիտական խորհրդի ընտրովի անդամ ընտրվեց կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ, պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ԵՊՀ-ի գիտական խորհրդի անդամության համար առաջադրել կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ. պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանի թեկնածությունը:

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի 90-ամյա հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպման և անցկացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, դեկանի տեղակալ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Քննարկվեցին միջազգային գիտաժողովի կազմակերպման և անցկացման վերաբերյալ կազմակերպչական որոշ հարցեր:

Քննարկման դրվեցին նաև ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված «Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգում» լրացումների մասին: Ըստ նոր կարգի ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանման գիտական խորհրդի առաջարկով և ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ «ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս» պատվավոր կոչում շնորհվելու է ԵՊՀ-ում առնվազն 30 տարվա գիտամանկավարժական ստաժ (որից առնվազն 10 տարին՝ ԵՊՀ-ում նաև վարչական պաշտոն զբաղեցրած), գիտական աստիճան ու կոչում ունեցող ԵՊՀ աշխատակցին երկարատև աշխատանքի, գործունեության և ԵՊՀ զարգացման գործում նշանակալի ներդրման համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, ամբիոնների վարիչները: Կ.Ա. Ղազարյանն առաջարկեց «ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս» պատվավոր կոչում շնորհելու համար ներկայացնել կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանի թեկնածությունը, բարձր գնահատելով նրա զգալի ավանդը կրթության և գիտության զարգացման գործում և համընդհանուր ճանաչումը: Ներկաները փաստեցին, որ ավելի քան երկու տասնամյակ ստանձնելով կենսաբանության ֆակուլտետի դեկանի պաշտոնը, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը մեծ ուշադրություն է դարձնում ուսումնական գործընթացի բարելավմանը և հետազոտությունների ժամանակակից մեթոդների ներդրմանը: Նշվեց, որ Է.Ս. Գևորգյանը մեծ ներդրում ունի նաև բարձրագույն կրթության կատարելագործման և կենսաբանական գիտությունների զարգացման գործում: Առաջարկը դրվեց բաց քվեարկության և ընդունվեց միաձայն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով այն, որ Կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանն ունի 45 տարվա գիտամանկավարժական ստաժ և 23 տարի զբաղեցնում է դեկանի պաշտոնը, ինչը լիովին համապատասխանում է ներկայացվող պահանջներին, Է.Ս. Գևորգյանի թեկնածությունն առաջադրել ԵՊՀ

գիտական խորհրդին «ԵՊՀ պրոֆեսոր-էմերիտուս» պատվավոր կոչում շնորհելու համար:

ԼՍԵՑԻՆ՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, «Կենսաբանության» ԳՀԻ Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող, կ.գ.թ. Նաիրա Ժորայի Սահակյանի՝ ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ «Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության» մրցույթին «Կատալազի էքսպրեսիայի կարգավորումը բուսական ծագման մետաբոլիտներով միկրոգլիալ բջիջների in vitro մշակման պայմաններում» նախագծի երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի ասիստենտ, «Կենսաբանության» ԳՀԻ ավագ գիտաշխատող Ն.Ժ. Սահակյանը: Նշվեց, որ նախագիծն արդիական է, այն հնարավորություն կտա ձեռք բերել մոլեկուլային կենսաբանության արդի մեթոդների վերաբերյալ համապատասխան գիտելիքներ, ժամանակակից սարքավորումներով աշխատելու հմտություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով այն, որ ձեռք բերված գիտելիքներն արդյունավետորեն կկիրառվեն ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետում իրականացվելիք տարբեր հետազոտություններում և ուսումնական ծրագրերում, երաշխավորել ներկայացվող նախագիծը մրցույթին մասնակցելու համար:

ԼՍԵՑԻՆ՝ «Կենսաբանության» ԳՀԻ Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ լաբորանտ Ալվարդ Մկրտիչի Մինասյանի՝ ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ «Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության» մրցույթին «Բուսական ծագման մետաբոլիտների հակաօքսիդիչ ակտիվության ուսումնասիրությունը միկրոգլիալ բջիջների կուլտուրաներում» նախագծի երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ «Կենսաբանության» ԳՀԻ ավագ լաբորանտ Ա. Մինասյանը նշեց, որ նախագիծն արդիական է և այն հնարավորություն կտա ուսումնասիրել օքսիդային սթրեսի պայմաններում բուսական ծագման ակտիվ միացությունների ազդեցությունը բջիջների ռեդոքս կարգավորման մեխանիզմների վրա, օգտագործելով մոլեկուլային կենսաբանության արդի մեթոդներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել Ա.Մ. Մինասյանի ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ «Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության» մրցույթին «Բուսական ծագման մետաբոլիտների հակաօքսիդիչ ակտիվության ուսումնասիրությունը միկրոգլիալ բջիջների կուլտուրաներում» նախագծի մասնակցությունը:

ԼՍԵՑԻՆ՝ «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր 2023» հայտերի մրցույթին մասնակցության համար Արհիշել Մինխի «Կանաչ նանոտեխնոլոգիաները որպես մշակաբույսերի արտադրության նպատակով գյուղատնտեսական հողերի աղակալումը կանխարգելելու մոտեցում» գիտական թեմայի երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանը, նշելով, որ թեման նախատեսվում է իրականացնել էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնում և Կենսաբանություն ԳՀԻ-ի Կիրառական կենսաբանության և էկոլոգիայի լաբորատորիայում: Կ.Ա. Ղազարյանը ներկայացրեց գիտական թեմայի արդիականությունը, նշելով, որ այն վերաբերում է ՀՀ-ի կարևորագույն էկոլոգիական հիմնախնդիրներից մեկի լուծմանը, ունի միջգիտակարգային բնույթ: Նախագծի նպատակն է իրականացնել հողերի աղակալվածության գնահատում Արարատյան դաշտի այն շրջաններում, որտեղ մեծ է ցորենի աճեցման հնարավորությունը, ուսումնասիրել և առանձնացնել ցորենի գենոտիպերն աղիության պայմաններում, բացահայտել կենսածին նանոմասնիկների ազդեցությունը բույսերի աղիության սթրեսի հաղթահարման գործընթացում և դրանց ազդեցության միասնիզմները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել «Կանաչ նանոտեխնոլոգիաները որպես մշակաբույսերի արտադրության նպատակով գյուղատնտեսական հողերի աղակալումը կանխարգելելու մոտեցում» նախագծի մասնակցությունը ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր 2023» հայտերի մրցույթին:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի լաբորատորիայի վարիչ՝ Մարգարիտա Մարգարյանի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Ա. Ֆ. Կարապետյանը: Նա ցավով տեղեկացրեց Մարգարիտա Մարգարյանի գիտական ղեկավարի՝ բ.գ.դ., պրոֆեսոր Մ.Գ. Աղաջանյանի մահվան մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ գիտական ղեկավար հաստատել կ.գ.թ., դոցենտ Լ.Ս. Ստեփանյանին:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի բակալավրի 2022-2023 ուս. տարվա ավարտական աշխատանքների որոշ թեմաների փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը: Հաշվի առնելով ամբիոնների վարիչների և դեկավարների կարծիքները թույլ տալ կատարել համապատասխան փոփոխություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Փոխել ստորև ներկայացված թեմաների վերնագրերը՝

«Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» կրթական ծրագիր

1. Հովնիկյան Աննա - դեկավար կ.գ.թ. Ն. Ռ. Հակոբյան
Թեմա՝ «Պրոգեստերոնի ազդեցությունը առնետի գլխուղեղի բջջակորիզային խոլին պարունակող ֆոսֆոլիպիդների բաղադրության վրա»:
2. Գևորգյան Մանե - դեկավար կ.գ.թ. Ն. Ռ. Հակոբյան
Թեմա՝ «Էզ առնետների ուրցագեղձի բջջակորիզային ֆոսֆոլիպիդների կրած քանակական փոփոխությունները պրոգեստերոնի ազդեցությունից հետո»:

«Կենսաբանություն» կրթական ծրագիր

3. Հակոբյան Աննա - դեկավար՝ ֆիզմաթ.գ.թ., ասիստենտ Կարեն Գրիգորյան
Թեմա՝ «Զրի որակի գնահատման ցուցիչների համեմատական վերլուծություն»

ԼՄԵՑԻՆ՝ դասընթացը կրկնելու գործընթացը կանոնակարգելու և ԵՊՀ կանոնադրությամբ նախատեսված պարտականությունների ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում կարգապահական տույժերի կիրառման ձևերի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ դեկանի դեղակալ կ.գ.դ. Կ. Ա. Ղազարյանը, ով գիտական խորհրդի նիստի անդամներին ծանոթացրեց դասընթացը կրկնելու գործընթացի կազմակերպման կանոնակարգի հետ և հիշեցրեց ԵՊՀ կանոնադրությամբ նախատեսված պարտականությունների ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում կարգապահական տույժերի կիրառման ձևերի մասին:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար
դոցենտ՝

Ի.Վ. Շահազիզյան

14.03.2023թ.

